ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԻՑ ՈՒ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԻՑ ՄԻՆՉԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԱՐԴԱՐԱՑԻ ԼՈՒԾՈՒՄ

ՍՏԵՓԱՆՅԱՆ Ս. Ս.

Հայերի ցեղասպանությունը՝ որպես մարդկության հանդեպ մեծագույն ոճրագործություն, լիովին հաստատված է աշխարհի տարբեր լեզուներով հրապարակված պաշտոնական փաստաթղթերով, ականատեսների վկայություններով, 1919-1920 թթ. Կոստանդնուպոլսում երիտթուրքերի, 1921 թ. Բեռլինում տեղի ունեցած՝ Թալեաթ փաշայի դատավարությունների աղագրություններով, մի շարք երկրների արխիվային, պետական ու դիվանագիտական պաշտոնական աղբյուրներով:

Այս ամենին ավելացնենք հայոց ցեղասպանության ականատես, գերմանացի մարդասեր Արմին Վեգների՝ ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնին ուղղած բաց նամակից միայն մի հատված, որն հնչում է այսպես. թուրքական կառավարությունը 1915 թվականի գարնանը ձեռնամուխ եղավ երկու միլիոն հայերի՝ երկրի երեսից բնաջնջելու իր հրեշավոր ծրագրի իրագործմանը. հայերը նահատակվում էին ամեն տեսակի երկրային մահերով, բոլոր ժամանակների մահերով»[1]:

Հայերի ցեղասպանության իրողությունը ոչ մի կասկած չի հարուցում: Սակայն ներկայիս թուրքական իշխանությունները կաշվից դուրս են գալիս, որպեսզի ժխտեն անժխտելին: Այս կապակցությամբ, առանց որևէ տարակուսանքի, ասենք հետևյալը: Եթե հարցնեն, թե մարդկության պատմության վերջին երեք՝ XIX, XX և XXI դարերի ամենամեծ սուտն ու կեղծիքը ո՞րն է, պատասխանը միանշանակ է՝ թուրքերի կողմից հայերի ցեղասպանության ժխտումը:

Աշխարհում տեղի ունեցած ցեղասպանությունների պատմության մեջ առաջին անգամ XX դարի առաջին կեսի վերջին 1948 թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունեց «Համաձայնագիր ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի ենթարկելու մասին»:

Այդ անչափ կարևոր փաստաթղթի ստեղծման համար մեծ դեր է կատարել ծագումով հրեա, հոլոքոստից փրկված, Լեհաստանից ԱՄՆ ապաստան գտած Ռաֆայել Լեմկինը: Հենց նա էլ ցեղասպանություն (գենոցիդ) եզրի հեղինակն է: Իհարկե, կարևոր է, թե որտեղի՞ց է սկիզբ առնում ցեղասպանություն եզրի կիրառությունը: Ռ. Լեմկինն այն շրջանառության մեջ է դնում հետևյալ դարձվածով. «Ես շարունակում էի ուսումնասիրել պատմությունը… Շուտով հետևեցին ցեղասպանության

---

[1] **Wegner A.** *Offener Brief an den Präsidenten der Vereinigten Staaten von Nordamerika Woodrow Wilson über die Austreibung des armenischen Volkes in die mesopotomische Wüste, Berlin-Schöneberg, 1919, S. 1-2.*

ժամանակակից օրինակները, ինչպես՝ հայերի ցեղասպանությունը»[2]: ԱՄՆ-ի Ալաբամայի համալսարանի գիտական աշխատակից Ս. Ջեկոբսը իր «Ռաֆայել Լեմկինը և հայոց ցեղասպանությունը» աշխատությունում ցույց է տվել, որ Լեմկինի տարբեր հրապարակումներում, նամակագրություններում, հոդվածներում, հարցազրույցներում կան նյութեր, որոնք առնչվում են հայերի ցեղասպանությանը: Ռ. Լեմկինի հավաքած նյութերը վերնագրվել են հայերի ցեղասպանության այնպիսի օրինակներով, ինչպիսիք են՝ «1890-ականների կոտորածները», «1909 թ. Ադանայի կոտորածները», «1915-1916 թթ. կոտորածները և տեղահանությունները»[3]:

Այդ ամենի հետ միասին, Ռ. Լեմկինը իր ձեռագրերից մեկում նշել է. «Հայերի հերոսական գործողությունների անհամար պատմություններ կան, և սարսափելի աղետին դեմ առ դեմ նրանց ցուցաբերած տոկունությունն արժանի է հիացմունքի»[4]: Հետևությունն այն է, որ «գենոցիդ»՝ «ցեղասպանություն» տերմինի հիմք է ծառայել հայերի ցեղասպանությունը ինչպես XIX դ. 90-ական թվականների, այնպես էլ XX դարի առաջին՝ հայերի ցեղասպանությունը:

Այժմ այն կենսական հարցը, թե ինչպես կարելի է կանխել ու վերացնել ցեղասպանությունը՝ որպես մեծագույն հանցագործություն մարդկության հանդեպ: Անվիճելի է, որ 1948 թ. դեկտեմբերի 9-ի ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի արդեն նշված համաձայնագիրը և դրանից 20 տարի անց՝ 1968 թ. նոյեմբերի 26-ին ընդունված համաձայնագիրը, որով մարդկության դեմ հանցագործությունների դեմ վաղեմության ժամկետ գոյություն չունի, կարևորագույն փաստաթղթեր են, սակայն երկուսում էլ բացակայում է մի անչափ կարևոր խնդիր՝ ինչպես վերացնել ցեղասպանությունը՝ որպես մեծագույն չարիք մարդկության հանդեպ: Կարծում ենք՝ ցեղասպանությունները վերացնելու համար անհրաժեշտ է վերացնել դրանց հետևանքները:

1. Հայերի ցեղասպանության ամենամեծ հետևանքը մեկուկես միլիոն անմեղ զոհերն են:

2. Հայերի ցեղասպանությունը, ի տարբերություն հոլոքոստի, իրագործվեց հայության բնօրրանում՝ Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում և Թուրքիայի հայաբնակ բոլոր վայրերում: Բնաջնջված արևմտահայությունը կորցրեց նաև իր բնօրրանը, տեղի ունեցավ հայերի հայրենազրկում:

3. Արևմտյան Հայաստանից, Կիլիկիայից և Թուրքիայի հայաբնակ վայրերից հայերի տեղահանությունը հայոց ցեղասպանության տարատեսակ է:

4. Հայերի ցեղասպանությունից մազապուրծները, նահատակնե-րի ժառանգները սփռվել են, հանգրվանել աշխարհի բազմաթիվ երկրներում: Կազմավորվել է հայ

---

[2] **Ջեկոբս Ս. Լ.,** *Ռաֆայել Լեմկինը և հայերի ցեղասպանությունը (Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, Ե., 2005, N 10-11, էջ 187-188):*

[3] *Նույն տեղում, էջ 190-191:*

[4] *Նույն տեղում, էջ 194:*

սփյուռք, որը թվաքանակով, շուրջ վեց միլիոն, զգալիորեն գերազանցում է ՀՀ-ում բնակվող հայության թվին:

Հայերի ցեղասպանության հետևանքների վերացման և պահանջատիրության կապակցությամբ իր ծանրակշիռ խոսքն է ասել հայերի ցեղասպանության ականատես Արմին Վեգները: 1919 թ. հունվարին ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնին ուղարկված՝ վերոհիշյալ բաց նամակում նա գրում է «Պարոն Նախագահ, փրկեցեք Դուք Եվրոպայի պատիվը: Ռուսաստանի ժողկոմխորհը ճանաչել է հայերի իրավունքը ազատ ինքնորոշման մասին, իսկ նրանց ազգային պատգամավորները Փարիզում հռչակել են Հայաստանի անկախությունը: Սակայն ժողովուրդները չպետք է բավարարվեն միայն այդ իրավունքի ճանաչմամբ, քանի որ Թուրքիայի հայկական մարզերը ներկայումս հանդիսանում են անմարդաբնակ երկիր, ուր երբեք չի վերադառնա դրա բնակչության երկու երրորդը: Բոլոր ժամանակների համար անուղղելի սխալ կլիներ, եթե Ռուսաստանի հայկական մարզերը ընդմիշտ չանջատվեին կայսրությունից, որպեսզի այնուհետև միավորվեն Անատոլիայի հայկական նահանգների և Կիլիկիայի հետ՝ որպես մեկ միասնական երկիր՝ ազատ թուրքական տիրապետությունից և ելք ունենալով դեպի ծով: Միայն այսպես հնարավոր կարող էր դառնալ փոխհատուցումը, հնարավորություն կընձեռվեր ռուսական սահմանն անցած բազմաթիվ փախստականներին՝ վերադառնալու իրենց հարազատ օջախները, կրկին վերակենդանացնելու դատարկված քաղաքներն ու գյուղերը: Դա էլ բավարար չէ, պարոն Նախագահ, ինչ գիտեք այդ ժողովրդի աղետի մասին: Բավարար չէ նաև այն, որ Դուք նրան տալիս եք պետություն վերստեղծելու իրավունք: Չէ՞ որ քարուքանդ են արվել նրանց տները, ամայացել են դաշտերը, սպանվել են բնակիչները, երկիրն այնպես է ավերվել, որ սեփական ուժերով չի կարող վերականգնվել: Ընդհատվել է առևտուրը, չեն գործում արդյունաբերությունն ու արհեստագործությունը: Ի դեմս բնաջնջված մարդկանց, այդ արժեքը երբեք չի կարող փոխհատուցվել: Տեղահանվածներից խլված ունեցվածքի յուրացմամբ, դաժան և անհոգի կառավարիչների կուտակած անհամար հարստությունը վերադարձնելու երաշխիքը գրեթե բացառված է: Շատ հայերի բռնությամբ մահմեդականացրել են, հազարավոր մանուկներ արտաքսվել են, հազարավոր կանայք առևանգվել և դարձել են թուրքական հարեմների ստրուկներ: Անհրաժեշտ է անվերապահ հավաստիացում, որ նրանք անարգել ազատություն կստանան: Անապատում երկու տարուց ավելի ապրած հալածվածները, որոնք կվերադառնան հայրենիք, պետք է ստանան այն հարստությունն ու ունեցվածքը, որոնք նրանք կորցրել են, իսկ բոլոր որբերը պետք է ապահովվեն անհրաժեշտ խնամքով»: Նամակի վերջում Արմին Վեգները նշում է. «Պարոն Նախագահ, հասկանալով հայ ժողովրդի տանջահար հոգին, չլսված տառապանքները, մարդկային ջերմեռանդությամբ բարձրացնում եմ իմ ձայնը հանուն աղետյալների, որոնց հուսակտուր հեծեծանքները անկարող էի լսել, նրանց ահավոր մահը անզոր էի ողբալ: Հանուն այն մարդկանց,

որոնց ոսկորները ծածկում են Եփրատի անապատները և կարծես մարմին առած՝ իմ սրտում են և կոչ են անում ինձ խոսել Ձեզ հետ… Եթե Դուք, պարոն Նախագահ, ճնշված ժողովուրդներին օգնություն ցույց տալու վսեմ գաղափարը իրականում դարձնեք ձեր քաղաքականության հիմնական ուղղությունը, ապա կհամոզվեք, որ այդ հզոր ու միակ մարդկության ձայնը կլսվի բոլոր ժամանակներում»[5]:

Հայերի ցեղասպանությունից անցել է 97 տարի, սակայն XX դարի այդ առաջին մեծ ողբերգության՝ ցեղասպանության ոչ մի հետևանք չի վերացվել: Այդ կապակցությամբ, լիբանանցի հայտնի արաբ գրող Մուսա Բրենսը առաջինն էր, որ հայերի ցեղասպանությունն անվանեց արմենոցիդ (հայասպանություն), որը մնացել է ան-պատիժ[6]: Նա ցեղասպանությունը բնութագրում է որպես «Քրեական կանխամտածված ոճիր, որի հետևանքները անչափ վտանգավոր են, քանզի ոտնահարում են մարդկության սկզբունքները»[7]:

Մուսա Բրենսի տվյալներով՝ հայերի ցեղասպանությամբ ոչ միայն մեկուկես միլիոն հայ բնաջնջվեց, այլև 200.000 հայ երեխաներ ու կանայք բռնի թուրքացվեցին[8]:

Հայերի ցեղասպանության հետևանքների վերացման վերաբերյալ գոյություն ունեն մի շարք միջազգային փաստաթղթեր: Դրանցից մեկը, որը ոչ մի իշխանության, ոչ մի պետության կողմից չեղյալ չի հայտարարվել, «Թուրքահայաստանի» մասին Ռուսաստանի ժողովրդական կոմիսարների խորհրդի դեկրետն (հրովարտակ) է: Այն ընդունվել է 1917 թ. դեկտեմբերի 29-ին:

Փաստաթղթի առաջին նախադասությամբ՝ «Ռուսաստանի կառավարությունը հայտարարում է հայ ժողովրդին, որ պաշտպանում է Ռուսաստանի կողմից օկուպացված «Թուրքահայաստանի» հայերի ազատ ինքնորոշման իրավունքը, ընդհուպ մինչև լիակատար անկախության հաստատումը»[9]:

Հայտնի է, որ «Թուրքահայաստանի», այսինքն՝ Արևմտյան Հայաստանի հայությունը հիմնականում ցեղասպանության ենթարկված կամ տեղահանված էր: Դրա համար էլ, որպես հարցի լուծման պայման, առաջ էր քաշվում Թուրքիայի տարբեր մասեր և արտասահմանյան երկրներ արտաքսված կամ փախստական դարձած հայերի՝ Արևմտյան Հայաստան անարգել վերադարձը կազմակերպելու հարցը: Ճիշտ է, խնդիր էր դրվում նաև Արևմտյան Հայաստանից դուրս բերել ռուսական զորքերը, կազմավորել

---

[5] **Wegner A.** *Offener Brief an den Präsidenten der Vereinigten Staaten von Nordamerika Woodrow Wilson über die Austreibung des armenischen Volkes in die mesopotomische Wüste, Berlin-Schöneberg, 1919, S. 7-8. Փաստաթուղթը բնագրից հայերեն է թարգմանել տողերիս հեղինակը:*

[6] **Բրէնս Մուսա,** *Անպատիժ ցեղասպանութիւն մը՝ հայասպանությունը, Պէյրութ, 1969, էջ 28:*

[7] *Նույն տեղում, էջ 29:*

[8] *Նույն տեղում, էջ 67:*

[9] *Документы внешней политики СССР, т.1, М., 1957, с. 74-75.*

հայկական ժողովրդական միլիցիա և հաստատել կառավարման դեմոկրատական համակարգ:

Միջազգային հարաբերություններում և հայերի ցեղասպանության հետևանքների վերացման գործում Հայկական հարցի լուծման փաստաթուղթ պետք է համարել նաև Սևրի պայմանագիրը:

Երկու փաստաթղթերն էլ ինչպես տարածքային, այնպես էլ այլ տեսանկյուններից ծառայում են Հայկական հարցի լուծմանը: Հարկ ենք համարում դրանք համադրել և հետևություններ անել:

Ռուսաստանի ընդունած հրովարտակով Արևմտյան Հայաստանն ինքնորոշման իրավունքով հռչակվում էր որպես անկախ պետություն: Արևմտյան Հայաստանի վեց նահանգների տարածքներն այսպիսիք են.

Սվազ - 49.700 ք.կմ
Էրզրում – 49.700 ք.կմ
Վան – 39.300 ք.կմ
Դիարբեքիր (Տիգրանակետ) – 47.220 ք.կմ
Խարպուտ (Խարբերդ) – 37.800 ք.կմ
Բիթլիս – 27.100 ք.կմ:

Այսպիսով, Արևմտյան Հայաստանի վերոհիշյալ վեց նահանգնե-րի տարածքը 284.820 ք.կմ է: Հիմք ընդունելով 1914 թ. հունվարի 26-ի՝ հայկական բարեփոխումների վերաբերյալ փաստաթուղթը, որով Տրապիզոնի նահանգը Արևմտյան Հայաստանի բաղկացուցիչ մասն էր, վեց նահանգին կգումարվի նաև Տրապիզոնի 32.700 ք.կմ տարածքը, և Արևմտյան Հայաստանի տարածքը կկազմի 317.520 ք.կմ:

Այժմ Սևրի պայմանագրի մասին: Հայաստանի համար ճակատագրական նշանակություն ունեցող այդ փաստաթուղթը կնքվել է 1920 թ. օգոստոսի 10-ին: Պայմանագիրը տպագրել են 14 պետություններ: Դրանք են՝ Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան, Ճապոնիան, Բելգիան, Հայաստանը, Հունաստանը, Լեհաստանը, Պորտուգալիան, Ռումինիան, Չեխոսլովակիան, Սերբերի, Խորվաթների և Սլովենների թագավորությունը, Հեջազը և Թուրքիան:

Պայմանագրում Հայաստանին և Հայկական հարցին վերաբերում են 88-93 հոդվածները: 88-րդ հոդվածում գրված է. «Թուրքիան հայտարարում է, որ ճանաչում է Հայաստանը, ինչպես այդ բանն արդեն արել են դաշնակից տերությունները՝ որպես ազատ և անկախ պետություններ»[10]: Պայմանագրով՝ հայկական պետությանն էին անցնում Վանի նահանգի 39.300 ք.կմ տարածքից 20.000 ք.կմ-ը, Բիթլիսի նահանգի 27.100 ք.կմ տարածքից՝ 15.000 ք.կմ-ը, Էրզրումի նահանգի 49.700 ք.կմ տարածքից՝ 40.000 ք.կմ-ը, Տրապիզոնի նահանգի 32.700 ք.կմ տարածքից 15.000 ք.կմ-ը: Այդ ամենը

[10] *Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне, М., 1927, с. 38.*

կազմում է ընդամենը 90 հազար ք.կմ: Այդ տարածքն ավելի քան երեք անգամ պակաս է Արևմտյան Հայաստանի տարածքից: Այդուամենայնիվ, դա ընդունելի է, իրատեսական և անչափ կարևոր, քանի որ ունենալով ելք դեպի Սև ծով՝ Հայաստանն ազատվում է շրջափակումից և առավել անվտանգ դառնում տնտեսական, քաղաքական ու ռազմական տեսանկյուններից: Ժամանակն է, որ Հայաստանի Երրորդ հանրապետությունը և սփյուռքը ձեռնամուխ լինեն Սևրի պայմանագիրն օգտագործելու Հայկական հարցի որոշակի լուծման համար, որի համար գոյություն ունեն պատմական, իրավական, քաղաքական ու բարոյական համապատասխան հիմքեր:

Հայկական հարցի արդարացի լուծմանը միտված՝ «Թուրքահայաստանի» մասին հրովարտակից ու Սևրի պայմանագրից հետո ստեղծվեց բացահայտորեն անարդարացի մի փաստաթուղթ՝ 1921 թ. մարտի 16-ին կնքված ռուս-թուրքական մոսկովյան պայմանագիրը, որով հայկական վաղնջական տարածքները ապօրինաբար տրվեցին Թուրքիային և Ադրբեջանին:

Այդ անարդարության մասին խոսվեց դաշնակից պետությունների՝ ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Անգլիայի ղեկավարների պոտսդամյան կոնֆերանսում:

Ժամանակն է չեղյալ համարել այդ խայտառակ պայմանագիրը և Հայաստանին վերադարձնել խլված տարածքները:

Պատմական դաս է նաև այն, որ Առաջին աշխարհամարտից հետո ստեղծված Ազգերի լիգան մի քանի անգամ քննարկեց Հայկական հարցը, սակայն դա ձևական բնույթ կրեց, և ոչ մի որոշակի քայլ չկատարվեց: Կարծես թե պատմությունն այժմ կրկնվում է: Միավորված ազգերի կազմակերպությունը, որն աշխարհի ամենաներկայացուցչական կազմակերպությունն է, երբևէ չի զբաղվել Հայկական հարցով, մինչդեռ դրա համար գոյություն ունի աշխարհին հայտնի նախադեպ: Հիշեցնենք, որ ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան 1947 թ. նոյեմբերի 29-ին որոշում ընդունեց վերականգնել ու ստեղծել մոտ երկու հազար տարի առաջ հրեաների կորցրած Իսրայել պետությունը: Այդ որոշմամբ, Իսրայելին տրամադրվում էր նրա պատմական հայրենիքի՝ Պաղեստինի ընդամենը 25 հազար ք. կմ տարածքից 14 հազար ք.կմ-ը, որն ամբողջ տարածքի 56 տոկոսն էր: Հետագայում այդ տարածքն ընդլայնվեց և հասավ ավելի քան 20 հազար ք.կմ-ի: Ինչպես տեսնում ենք, Պաղեստինի դժվարին հարցը երկու հազար տարի անց համեմատաբար հեշտ լուծվեց, իսկ Հայկական հարցը՝ ոչ հեռավոր անցյալում կորցրած հայրենիքի տարածքի 90 տոկոսի վերադարձման խնդիրը մնում է չլուծված:

Այժմ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և հետևանքների վերացման խնդիրների ու դասերին մասին: Անվիճելի ճշմարտություն է, որ հայերի առաջին ցեղասպանությունը սկիզբ է առել XIX դարի 90-ական թվականներից, և այդ ժամանակ զոհվել է 300 հազար հայ:

XIX դարի 90-ական թվականներից մինչև XX դարի 20-ական թվականները՝ 30 տարվա ընթացքում, սուլթանական, երիտթուրքական ու քեմալական կառավարողների պատճառով բնաջնջվել է ավելի քան 2 միլիոն հայ:

Այս ամենը պետք է դաս լինի ամբողջ մարդկության համար, մանավանդ դա պետք է նկատի առնեն Եվրոպական միության անդամները, որոնց շարքերը մտնելու մեծ ձգտում ունի ցեղասպանությունը ժխտող Թուրքիան: Աններելի է, որ ոչ ոք չի պատժվել, չեն պատժվում նաև ցեղասպան պետությունների իրավահաջորդ՝ ժամանակակից Թուրքիայի կառավարողները, որոնք համառորեն ժխտում են հայերի ցեղասպանությունը:

Արդի ժամանակներում Հայկական հարցը իր էությամբ նպատակամղված է Թուրքիայի կողմից արևմտահայության բնօրրան, ցեղասպանության և տեղահանության ենթարկված Արևմտյան Հայաստանը՝ հայրենիքը կորցրած հայերի ժառանգներին և Հայաստանի Հանրապետությանը վերադարձնելուն:

Դրանով կստեղծվի միացյալ, ազատ, անկախ ու հզոր Հայաստան, որն էլ կհանդիսանա աշխարհով մեկ սփռված հայերի, համայն հայության հայրենիքը: Այդ ամենով վերջնականապես լուծված կլինի Հայկական հարցը:

ОТ ПРИЗНАНИЯ И ОСУЖДЕНИЯ ГЕНОЦИДА АРМЯН К СПРАВЕДЛИВОМУ РЕШЕНИЮ АРМЯНСКОГО ВОПРОСА

СТЕПАНЯН С. С.

Резюме

Геноцид армян как тягчайшее преступление против человечества полностью подтвержден изданными на различных языках мира официальными документами – доказательствами очевидцев, стенограммами судебных процессов над младотурками в Константинополе (1919-1920 гг.), в 1921 г. – над Талаатом-пашой в Берлине, а также архивными государственными, дипломатическими документами различных стран.

Чтобы в мировом масштабе пресечь повторение подобного преступления, необходимо признание этого исторического факта, что должно ознаменоваться также возвращением Западной Армении – исторической родины армян. В этом и состоит справедливое решение Армянского вопроса.